

փոխանցել յետագայից . անոր համար նաև որչափ կարելի է՝ ապահովցընել նշխարներն ժամանակին ժանիքներէն և անզգայ աւերածուններէն . նորոգել և հաստատել վտանգեալքը և կործանման մերձաւորագոյնքը . և որոնք որ անհնարին են՝ ի հաստատել գէթ ըւստոտիպ նմանահանութեամբ անմուաց ընել . և մի անփոյթ և դանդաղ ըլլալ այս բանիս . վասն զի ինչպէս անդադար է ժամանակն , այսպէս նաև իրեն օրէնքն սպառիչ , որ գրեթէ ըստ հին առասպելին՝ օրէ օր կը կլլէ այն քարերէն մաս մը՝ որոնք կոփուած են մեր հարց քրտամբքն և արեամբք և շատ արտասուօքոռագուած : Ահա գրքիս տպագրութեան ժամանակն , մինչդեռ Անույ մը նացորդաց մէջ քան զամենն աւելի կանդուն և բարձրականգուն կը նկատէի և կը գրէի միջակառոյց աշտարակը , որ շատ փարսախներով հեռուէն անցորդաց աչքը իրեն կը ձգէր , և ամբողջ ութ դար կը դիտէր իր չորս կողմի եղածն , այնքան հարուածոց բնութեան և բռնութեան զիմակալութենէն ետքը , հոգմեահար տապալած տարածուած է (տարւոյս 6—18 փետրուարի) , հինն ըուն վրայ նոր աւերակ յաւերակս . և պակսեցաւ Անույ և բոլոր Հայոց աշխարհիս նշանաւորագոյն յիշատականոցիս երէն մէկն : Բանաւոր կամ գրուոր յիշատակարանաց կորստեան կամ նուազութեան ժամանակ , այդ աւերակներն մեր ազգին լռախօսիկ պատ-

մութիւնքն են , շատ անգամ ճոխագոյնք և միշտ ստուգագոյնք վիպասանից զըրուածներէն աւելի . . .

Բայց ինձի միանգամայն աւերակ և չէնք կ'աղօտանան՝ աւագ հայեցողութեամբ : Կարևոր խոստովանութիւն մ'ունիմ , գուցէ ուրիշ տեղ ալ յայտնած . վասն զի աշխատութեանս բուն ներքին նպատակն՝ ընդունայն և միայն երկրաւոր կամ հեթանոս կամ հելլենացի հայրենասիրութիւն և հայրենագիտութիւն չէ . այլ զայն հզօր օժանդակ մը կը համարիմ ազնուախոտ մը տաց՝ քան զերկիրս ի վեր թռչելու . ոչ միայն ինձի՝ ըստ իմ վիճակիս՝ պատշաճաւոր , այլ և ամեն յոյս ունեցողներուն ի լաւագոյն հանդերձեալսն . « Բոնե երկինք և քո է երկիր , ո՛վ Տէր . ըզհիւսիս և զհարաւ դու արարեր » . կը գոչէ աստուածահաճոյ Մարգարէն . իսկ ինքն Աստուած՝ անոր բերնով գոչաւորագոյն կ'ազդէ . « Երկինք աթոռ իմ են , և երկիր՝ պատուանդան ոտից իմոց » : Այդ պատուանդանիդ մէկ մասը կը ճանչնամ ես նաև մեր հայրենի աշխարհն Հայաստան . կը սիրեմ համբուրել հօս առաջին ոսնատեղին . այլ փութով անկէ գէպ ի վեր նկատելով՝ աւոր աթոռոյն վրայ կը փնտռեմ իմ հանդիստս . կը փափագեմ որ նաև իմ համակիր հայրենակիցքս յայն թեալ կոխեն . յոյն անկասկած և համաշխարհական հայրենեաց հայրենիքը , երանաւետ սիրաւէտ Աստուած աստանն :

ԱՇԽԱՐՀԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԱՐԱՅԻՐՈՒԹԵԱՄԲ

ՎԵՆԵՏԻԱԶԱՅ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ

Թերևս , եթէ ոչ յանդուգն , նորանշան բան մը համարուի , որ այնքան մեծամեծ և մեծապանծ ազգաց , տէրութեանց և ընկերութեանց մէջ , որոնք ազնուութեան և հանճարոյ փոխադարձ մրցանօք կը ներկայացընեն իրենց աշխարհագրական գիտութեանց գանձը՝ այս ազնուական և արժանաւոր Վենետիկ քաղաքիս մէջ , մտնէ

նաև այն ազգն կամ երկիրն , որ իրեն վաղեմի ազնուականութեամբն հանդերձ , հիմայ Ասիոյ նախնի ժողովրդոց տխուր նըշխարաց մէջ կը խառնուի . որոնք ի սկզբան ժամանակաց բռնած էին այն կեդրոնատեղին , յորմէ կը ծաւալէր աշխարհի վարչութեան շարժիչ զօրութիւնն , մինչդեռ այսօրուան արթուն զուարթունն լու-

րոպա՝ կարծես քնայից՝ դեռ ևս խանձար-
րոց քաղցր երազներով կը զբօսնայր։ Ար-
գարե վերջին տարիներուս մէջ, և յետ
վերջին պատերազմադրող բախման հրաւ-
խայ և նիւրաւայ հովտաց, ոչ սակաւ կը
լսուի թէ Հայ ժողովրդեան և թէ իր վաղըն-
ջական հայրենեաց անունն, բայց ոչ ա-
ռանց սրտառուէ յիշատակաց և երկիւղա-
լի անստուգութեանց։ Սակայն ՚ի բաց
թողով իր աւելի կամ նուազ բարեբաղդ
անցեալն, և չհետապնդելով ընտելն մը-
թին սապազայն, ներելի բլլայ մեզի վե-
նետկանն այս զուարթ և միանգամայն ու-
սումնական հանդիսիս առջև յիշեցնել, որ
յատկապէս տրեւելեան ըսուած աղգերէն,
Հայք միայն եղած են, որ անընդհատ վեց
դարերու յաջորդականութեամբ (Ճ.Գ.Ե. սկսե-
լով), ոչ միայն վաճառականական վերա-
բերութիւն ռենցեր են վենետկոյ հետ,
այլ և նախապատու ըսն զամենեւին սի-
րելի եղած են այս իշխողիս Աղրիականի՝ որ
իրեն ռոսիայի Մերակուտին գանազան վրե-
նոց մէջ, կը սեփականէր անոնց սիրելա-
ցոյն¹ և թագմերախտ անուանակոչու-
թիւնըր։ Հին բարեկամութիւնն և փոխա-
դարձ շահն որ զօրացած էր մէկ գիէն Ճ.Գ.
և Ճ.Գ. դարուց մեծ նիւիկիոյ Հոյ Սթագաւ-
րաց զանազան առանձնապէսութեամբք,
և միւս կողմանէ Մերակուտին ոչ սակաւ
Յայտարարութեամբք և վճար, Սոյս Ար-
քունեաց մէջ երկար ժամանակ իրարու
յաջորդող վենետկեան Դեսպաններէն և
Պայլերէն², պնդեցաւ և ևս հետագայ դա-
րուց մէջ, երբ Հայք իրենց անկախութիւնը
կորսնցուցին, վաճառականութեան միջո-
ցով. այնպէս որ կրեաւին երկարատեւ պա-

տերազմաց տաճանիկ տարիներուն մէջ,
կը խոստովանէին Հասարակապետութեան
իմաստակ խորհրդակաւք, որ իրենց այն
ժամանակի վաճառականութեան գրեթէ
միակ զարդացուցին էր Հայոց ձեռքով
եղած ելումուտըն, որով և ամենեւին զանց
չէին ընել որ և իցէ զիջողութիւն ընելու
Հայոց³։

Իսկ այս վերջիններս ոչ միայն յօժարա-
կամ գէպ ՚ի հիւրընկալ ափունքը կը յա-
ճախէին, այլ և ամեն տարի իրենցմէ զո-
մանն հօն կը թողուին, որոնք հետզհետէ
հօն իրենց ընկուծութիւնն հաստատեցին և
ընտանիք ւճացան։ մասնաւոր վերջին
անցած երեք դարերուս մէջ, յորս կը հան-
դիպինք վենետկոյ եկեղեցեաց Արժանա-
գորոց մէջ նշանակուած 200էն աւելի ա-
մուսուկան զաշխի Հայկազնի մը և վե-
նետկուհոյ մը մէջ, և փոխադարձ, Սա-
կայն եթէ բազմաթիւ էին վենետկոյ մէջ
հաստատուող Հայք, անհամեմատ աւելի
շատ էր ճանապարհորդաց թիւն։ յորոց
մասնաւոր շատեր կը կենային հօն միա-
նեւրով և ամբողջ տարիներով, և զանա-
զան անգամ նորէն կը դառնային։ Եւ որով-
հետեւ կրճատէր ժողովուրդ մ'էր և տար-
բեր յեզու և ձէն կը գործածէր, իրենց առ-
աջին խնամքներէն մէկն եղաւ սեփական
եկեղեցի ունենալ։ Եւ ինչ զարմանք որ
այս պանդուխտները, (որոնք խոսկոյ ա-
ւելի քիչ սոյցնւած զանազան քաղաքաց
մէջ ըսանուհինգէն աւելի եկեղեցի և
վանք հաստատած կամ ստացած էին, որ
և նոյն իսկ խոսկոյ հմտագունից անգամ
անձանթ մնացած է⁴), իրենց Ս. Մարկո-
սայ ափանց վրայ հաստատուած նախնա-

1 Հրովարտակով 1640 Օգոստոս 28ին, Մերա-
կոյան վաճառուց վրայ եղող Հինգ Գիտնոց (Եւ-
լադրուութիւնը կը հաստատեն, «այս բարեպաշտ
(benemerita) Ալքէին ամենայն գիւրութիւն
ընել, որ գրաւի մեծ գումարներ կու տայ կ'առ-
նու», և այլն։ Ուրիշ Հրովարտակով մը (30
օգոստ. 1710), «հ'սէն, գիշանէ «ապաւանաւ Բա-
րեպաշտ և Գիւրգիւն (prediletto) Հայ Աղբին»,
և այլն։ - Ներքին Հոգաբարձուք իրենց մեծ
ծանօթութեան մէջ, 1766 տարւոյն (17 մարտ)
կը յիշեն, «Աղբ մը» որ այնպիսի բարեպաշտ է
որպէս Զաւեթի (accetta) և օգտուող (utile)
Զերուս Գերմութեան»։

2 Հայկական նիւիկիոյ մայրաքաղաք, հաստա-
տեւը ՚ի Վենէ Ա. Արքայէ (1187-1219)։

3 «Այս Ալքէին օգնէն, որ առեւտրութեամբ
կը յաճախէ այս Գաղաքին մէջ վաճառակա-
նութեամբ, և մասնաւորապէս Մետաքսի տուր-
ւաւութեամբ, հասարակաց ամենեւին օգտա-
կարէ»։ (Հինգ Գիտնոց առ Մերակոյան, 24 ա-
պրիլ, 1643)։ - «Հայոց վաճառականութիւնն,

որ այս ժամանակներուս մէջ Բոլ կրնայ ըսուիլ,
կարեւոր առաւելապէս յորճէր այս Գաղաքս,
և անոնք փութով զփութին», և այլն։ (Նոյնք, 13
օգոստ. 1681)։ - «Ներկայ ժամանակաց կացու-
թեան մէջ, յորում քաղաքին վաճառականու-
թիւնն շատ ամփոփուած է, և մեծաւ մասամբ
այս Ալքէ զայն ոտքի վրայ էր բռնէ։ Մետաքս
և Արեւելից վաճառականութիւնն իրենց ձեռքն
ըլլալով, հանգրձն շահով Մոյն և Ելին զմարտի
Չ. Պերձ», և այլն։ Նոյնք, 13 յուլիս, 1658։ -
Մերակոյան, 8 օգոստ. 1648 Հրովարտակով կը
հաստատէ Հինգ Գիտնոց աղաքաբարութիւնը,
«մարտից օգտին և շահուն...» համար, «մա-
նաւորապէս ներկայ ժամանակաց կացութեանց
նկատմամբ, յորս վաճառականութիւնն շատ
ամփոփուած է, և մեծաւ մասամբ ոտքի վրայ
կեցած է նոյն ալքէն ձեռքով... Բայ Բարեպա-
շտ Գերմութեան Զերուս»։

4 Ըստ իմ փոխուծեանն այսպիսի քաղաք-
եւ. Հովով, Ֆիլիքեյ, Առքուն, Ռիմոն, Իւ-
րուճիւ, Օրփէգոյ, Սալեանց, Պոլոնեա, Յեր.

կան ժամանակներէն 'ի վեր առանձին եկեղեցի մը հաստատած ըլլան նաև հօս, իրենց հնաւանդ լեզուով եկեղեցական պաշտամունք կատարելով: Հայոց Սուրբ Թաթայի ամենազեղեցիկ եկեղեցին, Ս. Մարկոսի հրապարակին և Մայր եկեղեցոյն մօտ, յորում երկու դարէ 'ի վեր դեռ ևս հայ քահանայք եկեղեցական պաշտամունք կը կատարեն, ուրիշ նախընթաց փոքրագոյն եկեղեցոյ մը տեղ ոյն վրայ շինուած է. այս վերջինէս ալ առաջ կը գտնուէր հօն հնազոյն մատուռ մը, որ կը վերաբերէր նոյն ազգին Հիսրաւոցին: Հայոց Տաւ կոչուած, որուն հիմնադրութիւն եղած է Ժ. Կ. դարուն առաջին կիսուն, Սերաստանոս Տօթին Մարկոս Միանի որդւոյն առատածնունդէնմամբ: Այն առնէն 'ի վեր մինչև ցայսօր տեղւոյն անունը կը կոչուի Հայոց փողոց, և մերձաւոր կամուրջն՝ զոր հիմակ Ֆերայի կը կոչեն, մինչև Ժե դարուն մէջ Հայոց կամուրջ անունով կը յիշուի:

Վաճառականութեան և կրօնից իրարու հետ ունեցած դաշնակցութեան կապն անժանօթ բան մը չէ, որուն վրայ խօսիլ հարկ ըլլայ այս պարագային մէջ, ուր ուշադրութիւն կը գրաւէ մանաւանդ երրորդ դաշնակից մը, որ է Գիտութիւնն, և 'ի

բարա, Ճենովա, Բատուա, Ֆաղիոն (Մանֆրեանի), Սիւնա, Կուպպիոն, Բարմա, Ֆանէյա, Բիւլա, Ֆապրիանոյ, Նաբոլի, Բիսպոլեա, Կաւա, Լիվուռնոյ, ըստ կարգի առաջնութեան թուականաց որովք ճանչցուած են. մեծագոյն քանակ Ժ. Կ. դարուն կիսէն մինչև ցէս Ժ. Կ. մաս 'ի Միլանէ, Բոմպիւյէ, Բոնոպ Գուրուէէ, և այլն, յորս կը գտնուին Հայ Եւթաղ անուամբ մենաստաններ, ըստ ասոնց հայկական ուրիշ բան չունէին ըստ իմէ իրենց առաջին հիմնադիրք. որոնց յաջորդեցին Խաւարկէ մինչև 1650 տարին, յորում Միաբնութիւնն վերջեցուցաւ: Հայոց բազմութիւն եկեղեցիներէն և հիւրանոցներէն այսօրուան օրս կը մնան միայն Ղուովայ, Վինեակոյ և Լիվուռնոյնքն. քանի մը տարի առաջ կար նաև Սիւնգան: Խաւարկայ այնքաք քաղաքացի մէջ Հայոց գաղութան ծաղումն և ժամանակն, և իրենց փոքր գաղթականութեանց ընդունին, գեա. աղէկ յայտնուած չէ. և ինքի երևնալով որ աշխարհագրական և պատմական ուսմունքն, ժամանակը իտալականն, ետ չի կենար անոնց պարագայք ընդունալ, յարմար կը կարծէին, որ առանց գոհ ըլլալու այն քիչովն զոր իւրաքանչիւր քաղաքացի պատմաբանք մեզ աւանդեցին, կարենար ըլլալու օգտիւ թէ քաղաքական և թէ առնեսական Իւլանաց մէջ աւելն մանր խաղաղութիւն:

Եւ հօս հարեանցի յիշեմ հայկական դաշնականութեանց ուրիշ քանի մը եկեղեցական

մասնաւորի Ալիարհագրականն, որ կերպով մը հիմն կրնայ համարուիլ Վաճառականութեան: Այս սակաւ արդիւնք ունեցած է վենետիկ նաև Հայոց մէջ գիտութեան զարգանալուն նկատմամբ: Առաջին հայկական տպարանն հօս հաստատուեցաւ, և հայ տպագրութեան ճանչցուած ամենէն հնազոյն գիրքն (Սաղմոս մը), վերը յիշած Հայոց տան մէջ հրատարակուեցաւ յամին 1565, Հերոնիմոս Բրիուի Տօթին հրամանաւ, ինչպէս կը վկայէ այն Հայ Կուղգէմպէրին աղետական այրն Արգար (Գալի) Էւթոլիացի, Բնականապէս տպագրութեան անդրանիկ ծնունդն արժան էր 'ի պէտս կրօնից ընծայել. աշխարհագրական գիտութեանց մշակութեան հասնելու համար՝ ուրիշ ժամանակներ և ուրիշ միջոցներ պէտք էին. այլ և հանդերձ այստէ քարմանալի բան է, որ եթէ ոչ տպագրութեամբ, այլ գէթ ձեռագրով Հայկերէն առաջին նոր աշխարհագրական երկասիրութիւնն հրատարակեցաւ հօս 'ի Վենետիկ, և է Որդեիլոսի Հանդիսարան աշխարհի անուանի գրուածն, Թարգմանեալ յամին 1616 Սնկիւրիացի Բովլ. Մկրտչէ, որ չեմ գիտեր ինչ պատճառաւ յիշատակուցող կոչուած է Միլանի: Այս յիշեմ Թարգմանաւ քանի մը տարի վենետիկ կեցաւ,

ղիներ, գէթ վաճառականական տունք, յօտար գլխաւոր և 'ի քաղաք, Ժ. Կ. թուոց մէջ, զիւստուրացայ Մարտիլիա, Ամբիբոսն և Գաւիչէ. յօշոնութիւն կոչելով ռուսականաց աղետութիւնք, նմանօրինակ խաղաղութեանց վերաբերեալ Իւլանաց մէջ, մասնաւորապէս վերջին նշանակուած երկրին (Վալալի). վաճառքի քիչ ճանչուած են, և ուրիշ կողմանէ աւելի կարևորք, որչափ որ կը կարծուին փոխադարձ նուիրակութիւններ եղած ըլլայ Հայոց և հռչակաւոր Կարդուսի և հետ. Հայ վաճառականներ տեսնուած են նաև Ժ. Կ. դարուն վերջը Կրանդայի և Սիվիլիոյ մէջ, ինչպէս յետոյ աւելի յայտնալ 'ի Փարիզլիւնն և 'ի Գաւիչէ, Թերեսիլիոնց նախորդաց յարաբերութեանց շարունակ կողք Ժ. Կ. Կ. դարուց Կաղալանչալոց հետ. նման անոնք որ Ֆիւնաբիլիոյ, Պրաժի, Լոնտրայի, Փաղղոյ Սիւրեւիլիէի և Եամբանչալի, Բուլեանց և Մեախիլայի հետ ունէին, որոնք աւանքն ալ յիշուած են Պալտուչի Բեկուղդգի փութութեան գործակալէն:

1 Վինեակոյն Իւլանաց մէջ ոչ սակաւ խաղաղութիւններ բրած ըլլալով, մինչև ցարդ ճաւորեցայ գտնել այս նիւթոյս վրայ գրուած որ կամ վէճիւ մը: Փալով յիշատակեալ դրքին, Ս. Ղազարու Մատենադարանն օրինակ մ'ունի. ուրիշ աւելի կատարեալ մը Միլանի Ամբրանսին մէջ կը պահուի, նոյն իսկ տպագրողն պարգևեալ առ. մեծափառն Պրորոնէոս (Ս. Կաբոլոս):

ուր հրատարակեց նաև քանի մը գիրք 1642ին և 1645ին, տպագրեալ Սայիգադայի տպարանին մէջ։ Այն Որգելեան երկասիրութեան օրինակ մը, որ հեղինակին ժամանակակից կը կարծուի, գեռ ևս անտիպ կը տեսնուի յերևան դրուած Հայկական Աշխարհաճանդարին մէջ։

Այս գիտութեան վրայ, Հայկական և մասնաորայէս Վեհեմահայկական ուսմանց նկատմամբ այդ ժամանակէս մինչև արգեան թուականի մը հասնելու համար, ներքի ըլլալ ինծի երկայն շրջան մ'ընել, կամ մանաւանդ սրտթիւղ վերանայու աւանանայի դարուց մէջ, 'ի խնդիր հայկական Աշխարհագիտութեան, և կամ ընդհանուր գաղափար մը տալու Հայկական Աշխարհագրութեան։ Սնոր համար յարմար կը համարիմ որ կլիով ձեռք տուած կէայ, առաջնորդէր մեզի այն երկիրը՝ որ գրեթէ կապ մ'է ընդ մէջ Մեծին և Փոքուն Սիւր, ըիջ կամ շատ հեռաւորութեամբ՝ չորս միջերկրեայ ծովերու մէջ, ընդ մէջ բովանդակ երկայնաշար շղթայից կովկասեան լեռանց և Միջագետաց և Ստորտանի փնտհման հոգակաւոր դաշտավայրացն, յաշխարհն Հայաստան. որ հանդերձ իրեն սառնաշունչ ձմեռներով և իր նպատեան լեռանց անուանի ձիւնաշէն սպտումեանով, հանդերձ իրեն ծառերու այծմեան աղքատութեամբն, — (տխուր հետեանք պահատութեան իմաստուն ձևաւորութեան մը առարգաստիւր զօրութիւն բնութեան), — հանդերձ այսու ամենայնիւ է, և եղած է մանաւանդ աւելի հին ժամանակաց մէջ, հեշտալի գաւառ մը իրեն կանաչագորգ բարձրատափիցն համար. ուր հովիւն՝ Արաւհաճու և Նոյի ժամանակաց նման, նաև այսոր կ'ապրի նոյն ոճով և նոյնպիսի սովորութեամբը. և ուր հիմակուան Պարսիկն իրեն Աքեմենեան նախնեայ նման, որոնք ընկերացան Մեծին և Կրտերոյն Կիրոսի, իրեն աշխարհ շոտեղով, բազէն թէին վրայ, հետեանու կը սլանայ իսպախի, կատուի և այծնուան ետեւէն, Ասոնցմէ լատ աւելի առաջ, Հայաստանի երէպաւտ անտառք և ջրարբիք լաւ ծառթ էին ինքնապետաց և զքոսափրայց Բաբելոնի ու Նինուէի. ինչպէս նաև կարուաններէ և գաղթականներէ յաճախեալ ճանապարհէն, որ այն լեռնային երկրէն և Կողքիսի հեռաւոր սահմաններէն կը դիմէին այս երկու մեծապանծ մայրաքաղաքները։ Բնեռած և գրութեանց նորածին գիտութիւնը այս բանիս բաւական հաւաստիք կ'ընծայէ, և մանաւանդ ամենէն աւելի Ս. Գրոց ազգագրութիւնն, և նոյն իսկ մշտաշարժ այլք

վեմական և գոգեցն սրբազան գետոցն առաջակողմն Սիւրի՝ Եփրատայ և Տիգրիսի, այս նորածն և բնական ճանապարհք, յորս նաւարկելու համար՝ հարկ է անհրաժեշտ ելլել մինչև Բարձր Հայոց ձորահովիտները։ Այս երկու գետերն, և նմանազոյզն Երասխ և Կուր, և Արարտեան լեռինք՝ կրնան Հայաստանի աշխարհադարձեան ուսուցին արձանք յիշատակաց կոչուիլ, Սիւրի անթիւ ժողովուրդներէ ճանչցուած։

Բայց քննելով նաև զդասական մատենագիրս, առ որ կը դիմեն սովորաբար հմտագոյնք և ոչ գիւրեհաւանք, կը գտնենք նախ քան զՓսննոյիւն և քան զՆերդոտոս իսկ, յունագգի ամենահին պատմագրաց պատարկներուն մէջ, ոչ վեր 'ի վերջ ծանօթութիւն մը մեր երկրին աշխարհագրութեան մասին և իր շահարեք արգեան նկատմամբ։ Արիստոտել Միլետոսի բռնաւորն, որ Քրիստոսէ 610 տարի առաջ կ'ապրէր, մետաղական տախտակներու վրայ նշանակուած կը ցուցնէր Լակեդեմոնիոյ կղէտմենէն աքային Հայաստանի խաչանց և արքաոտց ճոխութիւնը։ — Սարգիսեցի Քուսեթոս, նոյնպէս հին քան զհռչակաւոր Արիստոտելն, Հայաստանի մէջ աղային լիճ մը կը յիշէ, որ անտարակոյս Վանայ լիճն է, ուր կը գտնուի միայն տառիկը ստուած ձուկն, որուն անունէն հաւանորէն մտած է յունարէնի մէջ տարիխոս (τάριχος) բառը, որ և իցէ աղած և չորցուցած ձուկն նշանակելով։ — Արդոյնիտեռ, աւտոյ ժամանակակից, կը յիշատակէ Հայաստանի լեռանց սառեւոր խաւերուն մէջ գոյացած կենդանական կամ ջրային նիւթերն, (որոնց քննութիւնը բնագիտաց կը թողում), զորս ինքն σκῆλαιας (որդնային) կը կոչէ, և Թեոփանիստ Ժորժէս (յեռնային), որ ըստ իրենց վկայութեան՝ զով և անոյշ ըմպելիք կ'ընծայեն, որք և ցայսօր իսկ բռնակիւց ծանօթ են, և կը համարուին Թափանցիկ որդեր, Որդոնի կոչուած 'ի Հայոց, և Զիւլայ 'ի Տաճկաց։ — Տարակոյս չկայ որ մեր աշխարհքն այս հին մատենագիրներէն աւելի աղէկ նկարագրիցին այն յունագգի աշխարհագիրքը, որք յառաջ քան զՍտրաբոն՝ Գ. և Բ. դարուց մէջ կ'ապրէին նախ քան զՔրիստոս, և են խիորդ փարագիւնացի, Ալեքսարգիտ, Արդոյնորոս Արտեմիացի, Իպպարքոս Նիկիացի, և այն մանրախոյզ քննիչներն, զորս Պտղոմեանց հովանաւորութեամբ առաքեց Սղեբսան գրեան ձեմարանն։ — Բայց Հայաստան գեռ աւելի լաւ ծանօթացաւ և նկարագրեցաւ յաջորդ դարուն մէջ, երբ արծուիք և լեզէնք Հռովմէականք անցան անգր

քան զԴիփրատ և զԻրասխ. Թեոփանոս՝ որ կ'ընկերէր Պոմպէի բանակին, Հայաստանի մասնաւոր նկարագրութիւն մ'ըրաւ, ինչպէս կը վկայէ իրեն աշակերտն Ստրաբոն, ամենէն աւելի սկանաւոր աշխարհում գիրն՝ ինչպէս ուրիշներով՝ այսպէս նաև մեր երկրին, Թէպէտ և ոչ ստուգապատում քան զամենեւին, որ և ոչ սակաւ զարմանք կրնայ ընծայել մեզի, Պոնտացի կամ մանաւանդ ըստ գիտնող ոմանց՝ Հայագի ըլլալովն. Բայց պէտք ենք յիշել որ Թէպէտ և ամեն աշխարհագիրներէ աւելի ընդարձակ երկիրներ պարտած ըլլայ, ինչպէս կը պարծի, այլ մի և նոյն ժամանակ մեզի կը յայտնէ թէ այցելած չէր գրիթէ իր ծննդեան տեղւոյն սահմանակից Միծին Հայոց աշխարհը: Լաւ ծանօթ են բանասիրաց՝ իրեն զանազան իրաց վրայ ըրած գրութեանց մէջ գտնուած թազմաթիւ և ոչ մանրակշիռ սխալներն: Հանգեծալ այսու ամենայնիւ, ինքն է որ առաջին անգամ կը զանազանէ Հայ աշխարհին տոհմական բաժանմունքներն 'ի մեծամեծ գաւառս կամ Նախնաքս, յորոց քսանի չափ կը յիշէ յառնանէ: Թուի Թէ շատ բան սորված ըլլայ իրեն ուրիշ վարժապետէ և հայրենակցէ մը, որ է երևելի քերականն և գրապետն Տիրակիոս, բարեկամն Ալիբրոնի, որ ինչպէս անուամբ՝ այսպէս և արտամբը Հայազգի կ'երեւի: Չեմ գիտեր արդեօք Հայոց Թէ մանաւանդ Պարսից ազգին կը վերաբերին 'ի Հաւանանացոյն յիշեալ Արշակ և Ափրատիսիանոս՝ աշխարհագիրներն, որոնց և ոչ իսկ ապրած ժամանակը ծանօթ է: Ոչ սակաւ օգուտ քողեց Սմասիացին (Ստրաբոն) նաև ուրիշ ժամանակակից մատենագիր մը, որ է ինքնին Մետրոպոլիտ, որ զո՛ք եղաւ իրեն Հռովմայեցոց դէմ ունեցած անհաշտ ատելութեանը, որուն համար նախ բարեկամ եղաւ անոնց անհաւոր անոյեանին՝ Պոնտացոյն Միհրդատայ, և յետոյ ասոր փեսային՝ մեր խորիւս Տիրակնայ, որուն նաև պատմութիւնն կամ Թերիս ներքոյն յօրինեց քանի մը գիրք բաժնած, որք զժողդաբար իրեն ուրիշ աշխարհագրական գրուածոց հետ կորսուած են, որոնց համար արժանի եղեր էր Աշխարհագիր մականունն ստանալու:

Ստրաբոնէն վերջը ամենածանօթ են, և զորս աւելորդ իսկ կը համարիմ յիշել, մեր Թուականին առաջին դարուն մէջ էրեցն Պլինիոս, որուն ծանօթ էին Հայաստանի 120

ընդարձակ Նախարարութիւններն կամ Նախահանգներն, յորոց ոմանք հին ատեն առանձինն վարչութիւն կամ Թագաւորութիւն ունէին. Բայց նա կ'արդարացնէ ինքզինքը անոնց անուանքը յիշելուն համար, իրրով Թէ հնչումներն չափ խժալուր ըլլար հռովմայեցի ականջաց կամ գոռագութեանն առջև². Այս տեղեկութիւններս քաղած էր յԱլիփիոսէ և 'ի Կլաւար Կլաւիոսէ: Երկրորդ դարուն մէջ ամենէն աւելի կը փայլի հռչակաւորն Պտղամոս, որ բաց 'ի կրրկին Հայոց (Մեծ և Փոքր) մէջ յիշած երևուածէն աւելի Նախահանգներէն, կը զնէ նաև ցանկ մը՝ յորում նշանակուած են 131)էն աւելի քաղաքներ և աւաններ, սովորական աստեղաբաշխական դրութեամբ իւրաքանչիւրին գիրքը նշանակելով, յորոց մի մասն անծանօթ և տարակուսական է: Բնականապէս իրմէն օգուտ կը քաղէր յաւորդ դարուն մէջ Մոյսիսոս: Իսկ չորրորդ դարուն մէջ, Թէպէտ և ընդ աղօտ, կը հանդիպինք Աղեքսանդրացի Թուարանի և թազմաթիւ մը՝ Պապպոս անուամբ, Պապ կոչուած 'ի Հայոց, ժամանակակից նոյն ազգին առաջին պատմագրաց, որոնք նմանապէս յունարէն լեզուաւ կը մատենագրէին այն ատեն: Մեզի՝ Հայոցս համար Պապի գործը ամենամեծ կարեւորութիւն ունեցեր է. վասն զի իրեն համաօտուութենէն (զոր Պտղոմէոսի գրքէն ըրած էր) մեր առաջին հայ աշխարհագիրն իրեն Աշխարհագրութեանը նիւթ քաղեց. այս վերջին գրութեան հետադրեքի եղողներն կրնան քննել Ս. Ղազարոս տապարանէն 'ի լոյս բնծայեալ նոր տաղգրութիւն մը՝ հանդերձ զաղդիական Թարգմանութեամբ, որ դրուած է հօս 'ի Հանդիսիս: Թարգմանիչն յառաջաբանին մէջ խնդրոյ տակ ձգած ըլլալով՝ Պորժոյն մատենագիրը, այսչափ միայն կ'ըսեմ ես, որ ըստ հասարակ կարծեաց՝ Մայիսի խորհանցոյ կ'ընծայուի այն, որ մեր մատենագրաց մէջ քան զամենն աւելի հռչակաւորն, և հինգերորդ դարուն ամենահմուտներէն մէկն է: Ինքը մասն մը յունէն Թարգմանեց և մասն մ'ալ ուրիշ աղբիւրներէ աւելցուց, նշանակելով նաև իր հայրենեաց զանազան բաժանմունքներն, որ են Միծին Հայոց 15 բաժիններն կամ աշխարհներն և 190 գաւառներն, և Փոքուն Հայոց երեք աշխարհներն, իւրաքանչիւրն իրենց յատուկ անուամբ, որոնց մեծ մասն նաև ցայսօր իսկ յազգայ-

1 Գուցէ Հրահատ էր այդ ծած անունն:

2 Կը բաժնուի (Հայաստան) 'ի Զօրավարութիւն Տրապիզու, Praefecturae, յորոց ու-

մանք և առանձին Թագաւորութիւնք, բարբարոս անուններով, 120 ու - Բնական Պատմութիւն, Զ. 10:

նոց պահուած են, խորեննացոյն Աշխարհազորութիւնն, իրեն անուանի միւս երկաւսիրութիւնէն աւելի տաւալ, որ է Հայոց Պատմութիւնն, հրատարակուեցաւ նախ տապաքերալ յԱմսդերտամ, յամին 1668, և յետոյ դանագոսն անգամ 'ի Վենետիկ. առաջին անգամ թարգմանուեցաւ լատիններէն լեզուաւ յանգղիացի վիթրնեան եղբարց, լոնտարայի մէջ, յամին 1736. և յետոյ ուրիշ լուսագոյն թարգմանութիւն մը 'ի գաղղիերէն Հանդերձ պատմիորք և բազմութիւն ծանօթութեամբք, հրատարակուեցաւ Բարիզու մեջ յամին 1818, հմուտ Յ. Սէն Մարդէնի ձեռքով: Այս վերջնոյս սրամիտ քննութեանն առջև, այս երկաւսիրութիւնն ոչ թէ խորեննացոյն, այլ ուրիշ վերջին ժամանակի հեղինակի մը գործ թուեցաւ, վասն զի բնագրին մէջ կը գտնէր անուններ և տեղեկութիւններ, որ յետոյ էին ժամանակաւ մինչև այն ատեն հեղինակ համարուած անձէն, Նոյն կարծիքն ունի նաև մեր արդի հմուտ ազգային Պատկանեան, վարժապետ 'ի Համալսարանին Պետերպուրկի, որ այս գրուածը ուսներէն թարգմանեց Հանդերձ բազմութիւն ծանօթութեամբք, բնծայելով զայն ազգային երևելի Քուստանի կամ չափազիտի մը է՝ գորտուն մէջ ապրած, Անահայ Շիրակաւնոյ: Տարակոյս չկայ որ այս տեսակ գրուածոց մէջ դիւրաւ տեղի կ'ունենան փոփոխութիւնք, յաւելումք և խանգարմունք, ինչպէս կը տեսնուին նաև մեր նոր հրատարակածին մէջ բաղմաթիւ աղաւաղմունք կամ փոփոխումներ, որք թերևս էր դարձուն մէջ եղած ըլլան, մասն մը, ըստ իմ կարծեանցս, արարական արշաւանքէն առաջ, որ գրեթէ 657-641 տարեաց մէջ կ'իյնայ. և առ այս հաւաստիք կը համարիմ՝ որովհետեւ ոչ անոնց արշաւանքին յիշատակութիւն կը գտնուի, և ոչ երկրին մայրաքաղաքին (Կոնիսի) առմանն, և մի մասն նոյն դարուն վերջին կիսուն մէջ, որուն անձխտելի վկայք են պատմուած գէպերն: Սակայն ով որ ծանօթութիւնն հայկական մտանաբարութեան յառաջատուութեան և հայկաբանութեան վրայօք, կարելի չէ այնպիսոյն այսպիսի գրուածի մը սկզբնագիրը՝ մեր գրականութեան սկիզբէն կոչեցնալ էր դարէն վերջը կարգել: Կը համարիմ որոշին որ այս աշխարհագրութիւնն Մովսիսի խորեննացոյ ըլլայ, բայց ձեռք խառնուած էր դարուն մէջ: Բայց թէ յորմէ՞ արդեօք՝ չեմ կրնար հաստատապէս հաւաստել: Թերևս վերջ յիշատակուած Շիրակացիէն ըլլայ, որովհետև կը գտնուին փոփոխութիւններ՝ ու

րոնք կը վերաբերին իրեն Հայրենեաց Շիրակայ և անոր սահմանակցաց իշխողներու: Կրնայ նաև ընծայուիլ Մարտապոլայի, որ Մետրապոլիտ էր Սիւնեաց աշխարհին, յորում իր իշխանութիւնը կը վարէր 630-50 տարեաց մէջ. և այս բանս կ'ըսեմ՝ վասն զի քանի մը տարի առաջ ծանուցուեցաւ իշխանոնի անուանի կաթողիկոսական աթոռայն և վառաց վերաբերեալ հայկական ձեռագրաց ցանկի մը մէջ՝ Հայաստանի աշխարհագրական նկարագրութեան մը գիւտը, այս նկարագրութիւն անուամբ, բայց անկից վերջը հրատարակուած ցուցակներուն մէջ ասոր յիշատակութիւնն չի գտնուիր: Կը յուսամ որ հոյն Հայաստանի Աշխարհագրութեան այս մեր նոր հրատարակութիւնն, անործելի ըլլայ մեր աշխարհին, ինչպէս նաև ընդհանուր արևելեան աշխարհաց վրայ քննութիւն ընող գիտնոց: Այսի գտնին վերջիններս այս տապաքուութեան մէջ նոր լուսաբանութիւնք ամենէն երասխայ ընթացից փոփոխման ըլլայ, ինչպէս նաև այն գետակաց՝ որ Տարոս լեռներէն Տիգրիսի մէջ կը թափին. որոնք թերևս նոր նշոյլ մ'արձակեն Հոյսկաւորն Տիգրանիքի տիգրից վրայ, որ նաև վերջին ժամանակներս իսկ մեծամեծ քրնութեանց նիւթ եղած է ոչ սակաւ համբաւուոր հմուտ:

Ընդ մէջ մեր և այս աշխարհագրական գործոյս երկասիրութեան անհուն ժամանակին, այսինքն տասուերկու կամ տասնուչորս դարուց միջոց, Հայաստան ենթակայ եղաւ բազմութիւն և ամենամեծ քաղաքական յիւսիսութեանց, եթէ իր ներքին վարչութեան և եթէ իրեն քաղաքական բաժանմանցը մէջ. մէկ կողմէն Բիւզանդիոնի կայսերք, և միւս կողմէն՝ Սասանեանք Պարսկաստանի Կո, էր և ջր դարուց մէջ կամահաճոյ բաժանմունքներ ըրին, որուն տիրանի մը կրնար տեսնել Յուստինիանոսի Հռոմեացի Մնացորդաց (Որինագորաց) մէջ: Մեր աշխարհին տիրապետութեան մէջ ասոնց յաջորդող Արաբացիք, իրենցմէ շատ աւելի յարգեցին հին տեղեկական բաժանմանց կարգադրութիւնը, որ և անխախտ հաստատութեամբ միշտ պահուեցաւ նաև յազգայնոց, այնպէս որ Կո դարէն սկսեալ մինչև ցԹԿո գալ՝ ամեն մեր պատմագիրք, որք գրեթէ անընհատ մէկմէկու կը յաջորդեն, իրենց հին Աշխարհագրին բաժանմունքներէն դուրս՝ ուրիշ բաժանմունք չկան ճանար Հայոց երկրին. որուն վրայէն նաև Պերսիեաութիւնն (կոստանդանոս է) իրեն վարչութիւն կայսերական Արքունեաց

գրուածոց մէջ. և ապա կը հաստատեն զայն ԹԻՖԼԻՍ գարուն մէջ ձևացած ազգային թագաւորութիւն և իշխանութիւնը: Թէպէտ և այս դարերուս, ինչպէս նաև յաջորդաց մէջ, բազմաթիւ են եթէ ազգային և եթէ քիւզանդական և Արաբական պատմագիրք, բայց աշխարհագիրք և մասնաւորապէս մեր երկրին Նկարագիրք միայն այս ետքիններուս այսինքն լրարատացւոց մէջ կը գտնուին, որոնց ամենահարուստ մատենագրութեան բովբն զեռ ևս ըստ բաւականին ծանօթացած չէ:

Տասներորդ գարուն վերջին ապրող մեր պատմագիրներէն մէկը ժայն, Սիւստանէ եպիսկոպոս Սերաստոյ, հայկական քաղաքական և կրօնական պատմութեան համառոտութիւն մը գրած ժամանակ, ինչպէս իր յառաջարանէն կ'իմացուի, միտք ունէր աւելցնելու իր երկասիրութեան երրորդ մասին մէջ տեղագրութիւն մը այն գաւառին՝ յորում կը բնակէին մասն մը իր հերձուածող համարակ ազգայիններէն, որոնք ծաղր կամ ծաղրք կը կոչէին, նշանակելով յայն՝ յանուանէ իրենց իւրոքանչիւր գեղերը, գղեկները և բնակութիւնները. գծադրաբար երկասիրութեան այս մասը ձեռքերին հասած չէ: Իսկ այս նկարագրելիք գաւառը իրեն թեմական սահմանէն հեռու պիտի չըլլայ, այսինքն Փոքուն Ասիոյ մէջ Նիքարատայ արևմտեան ափանցը վրայ: Նիքարատայի ծախրոց բաղդ մը գրկեց զմեզ թիւրևս խորանցողի երկասիրութեան նման ուրիշ աշխարհագրական գրութեան մը, ԺԳ գարուն և ԺԿին սկիզբները ապրող հեղինակի մը, որ մեր մատենագրութեան ընտրելոց վերջինն է, Յովհաննէս Երզրնկացի, քաղքէ մը՝ որ լաւ ծանօթ էր նաև Միջին գարուց մէջ իրեն անուանի պոքերամաներովը: Այս երկասիրութեան վրայ ձեռագրաց ցանկին մը մէջ պարզ յիշատակութիւնն է պատ՝ ուրիշ ծանօթութիւն չունիլը: Մեզի հետ ցուած ժամանակ թող չգարմանայ ընթերցողն այս մեր ըրած կորուստներուն վրայ, որոնք անթիւ են. վասն զի մոլեռանգն հայածմունք և անբացատրելի շարասէր առեւտրութիւն մը, չի գաղրիք նաև այդոր իսկ այն թշուառ երկրին մէջ՝ բնաջինջ կործանելու որ և իցէ արբազան յիշատակ կրօնից կամ գիտութեանց:

Ժամանակակից վերը յիշած հեղինակին, Նորոյն Հայաստանի, կ'ուզեմ ըսել Կիլի-

կիոյ մէջ, կը ծաղկէր իշխանազն մատենագիր մը, երևելին Հեթում, տեր Կոտիկոսի, եղբորորդի իրեն համանուն հօրեղբորն Ս. Հեթումի թագաւորին Հայոց, որ շատ լաւ ծանօթ էր Վենետիկ Հասարակապետութեան՝ այս վերջնոյս վաճառականաց տուած Աւանմանչորհութեամբ: Մարկի Արևելեան Պատմաբան կամ Պատմարիւն թարգարաց երկասիրութեան այս իշխանագուն հեղինակն, ամենամտեղիմ բարեկամութիւն ունէր նաև նաւոր Վենետիկացոյն Մարկոյ Սանտայոյ Դոյսկոյի հետ, որուն նաև նոր խաչակրութեան մէջ կազմելու գաղափարն մասնակից էր: Շատ հաւանական է որ վերաբերութիւն ունեցած ըլլայ նաև Մարգոյ Բարդի հետ, որովհետև այս վերջինս երկայն ատեն կեցաւ Սալաս, (այն ժամանակուան սաւաղին կարգի վաճառականական նաւահանազանգիստ Միքելիսականի վրայ), և յորքոնիս թագաւորին Հայոց. ուր կարելի է որ ինքն, ինչպէս նաև իր հայրն և հօրեղբայրն, լսած ըլլան նոյն իսկ Հեթում թագաւորին և անոր երեց եղբորն Սարատ գունդատայի՝ ըրած ուղեգրութեանց պատմութիւնները, յորս միմեանց զկնի ձեռնարկեր էին 1248-1253 տարեաց մէջ, և յետին հասուցած է մեղի գաղղիարէն գրած հետարքարական նամակ մը առ քեռայրն իւր՝ թագաւորն Կիպրոսի: Մինչդեռ իւր թագապսակ եղբայրն համարուած ծանօթութիւն և բերանացի երկար պատմութիւններ կը թողոյր, գործող հաւաքից փութալման և եռանդուն խնամքով իւր երրորդաւոր եղբորորդին Հեթում. որ շատ ժամանակէն վերջը զայնս կարգի գրու, և իւր ինքնակամ մենակեցութեան մէջ, կ'ուզեմ ըսել ի Գաղղիա Բուադիէի Պրոնմանգրագեանց վանքին մէջ, գաղղիներէն կը թելադրէր զայն Ֆրանցիս անունով անձի մը, Մարգոյ Բոլոյէն քիչ տարի ետքը, որ ակամայ բանտարգելութեան մէջ ի ձեռնով՝ թելագործ էր իւր Միլիոնէ գրուածքը՝ Ռուտիլիանոյի, Եթէ այս հրուշակաւոր Վենետիկցին նախապատու է ի բարեխիշատակ շարս միջնադարեան ճանապարհորդաց, ևս կ'առաջարկէի. որ մեր Հեթումը նախադասուի իրեն ձեռք տալու, քիչ էր ետև թողով ըլլոր զուրիշները: Իւր Արևելեան Պատմագրութիւնը, գրեալ ինչպէս ըսի, սկզբնագիր գաղղիերէն, ետքը թարգմանեալ ի նոյն իսկ Ֆրանցիս ի լատին լեզու, կրկին թարգմանուելով ի գաղղիերէն լեզու Յովհաննէս Լը Ղան ա'ի քրիստի ձեռք, մենք ալ նոյնպէս թարգմանեցինք ի լատինէն ի հայ, մինչև ցարդ Ձև-

1 « Աւր կ'ըլլուի աշխարհիս լաւագոյն պուքերամը », նաև ըստ Մարգոյ Բոլոյի: Յայտնի է որ պուքերամը բաժնակեայ կուս մ'էր:

ազգրաց ցանկերուն մէջ յիշուած հայկա-
կան սկզբնագիրն օրինակ մը չգտնելով՝
Հեթմոյ Եւրիք գրուած մը իրեն ընկի լե-
զուով գրած չունիմք. բայց եթէ համառօտ
թամանակագրորսին մը՝ գլխաւոր անցից
Հայոց և դաշնակից ազգաց ԺԻ և ԺԿ դա-
րուց մէջ հանդիպած, որոնց մէջ կը յիշա-
տակէ վիենտկեզուց ընդ ձենտվիսիւ Ը-
րուած նաւամարտութիւնը վերոյիշեալ Այա-
սի ջրոց մէջ 1293ին, ինչպէս նաև նոյն
երկուց հասարակապետութեանց կոս-
տանդնուպօլսոյ մէջ 1296ին ըրած կոտիւն
դէպքը:

Բազումը՝ մանաւանդ թէ բազմազոյնք 'ի
Հայոց, յաճախեցին այն երկայն ճամ-
բան, սկսեալ յափանց Միջերկրականին,
Եփրատաց, Թէ քաղաքական գործոց համար
և թէ վաճառականութեան պատճառաւ:
Եթերևս նոյն յաճախութեամբք այն հե-
ռաւորագոյն երկիրները՝ իրենց՝ ծանօթա-
նալով, չունեցան նաև փափագ անոնց
նկարագիրն ընելու. և արդարև չունիմք
բաց 'ի վերոյ ասացեալ Հեթմոյ գործէն՝
Խարիշ մը, բայց եթէ ցամաք յօդուած մը կ'ի-
րական պատմիկն մէջ, Հեթմոյ Ա ճանա-
պարհորդութեան վրայ, որ իրեն ժամա-
նակակից էր, և սակայն կարևոր և ու-
շագրութեան արժանի. գոր և այնպէս հա-
մարեցոմ՝ բայց յայլոց՝ Քլարքոթ, Խա-
չակրաց Պատմչաց չարքը հաւաքող Գաղ-
ղիացիք, և վերջիւս իմաստուն գրապետն
Եղուշկարտի Պ. Հայտի, իւր Միջին դարու
արեւելեան վաճառականութեան սքանչելի
Պատմութեան մէջ:

Եւզի համար արժանաշարժ է նաև գրե-
թէ ժամանակակից զգուշաւոր պատմիչն
Սիւնեաց աշխարհին Ստեփանոս Ուսպեկեան
մետրապօլիտ, որ կը կնքէր իւր Հայրենիաց
և Թեմին Պատմութիւնը յարելով 680 գիւ-
ղորէից անունները, որք տասուերկու գա-
ւառներու մէջ ցրուած են, անոնք միայն
որ եպիսկոպոսական աթոռոյն տասանորդ
կու տային: Եւ այս՝ Միծին Հայոց 15 Նա-
հանգաց մէկուն՝ միակ ճոխ ցուցակն է
որ մեզի հասած է. և Թերևս այս ալ չոր-
սին մէկն է ամբողջ այն գաւառին (Սիւ-
նեաց). վասն զի ըստ միւր նոյն Պատմը-
չին, ԺԻԶ դարուն՝ որ է ժամանակ ակն-
ման, ազգային Թաղաւորի մը ստացած եր-
կրին կէսը կը պարունակէր աւելի քան
գ1400 գիւղս, 43 բերդս, և 48 գլխաւոր
մենատանս:

Իբրև մասնաւոր աշխարհագրութեան
գրող ԺԻ գարուն մէջ կը յիշուի Վարդան
մը. համառօտ ծանօթութիւններ կու տայ

օտար տէրութեանց վրայ, և աւելի ընդ-
արձակօրէն կը խօսի իւր հայրենեաց Հա-
յաստանի վրայ, ուր արդէն Արաբաց, Սիւ-
թացուց և Թաթարաց և այլ ազգաց ուժ-
գին հիւղեղաց արշաւանքներն հանդիպե-
րէն, և կորսնցուցեր էր ոչ սակաւ իւր հին
անունականոյթութիւնները. անանկ որ լուս
համարեցաւ մատենագիրս քաղաքապետ
ատենաւան անուններն իրեն ժամանակա-
կիցներուն հետ, Կլարպայի համառօտ ակն-
արկութեանը մէջ, կը զարմանայ Վար-
դան Բարիզու վրայ՝ Կարդոց վարդապետաց,
և կը վերջացնէ իւր գործը ըսելով. «Վե-
նետիկ որ նստի 'ի ծովու, ուր քիմիորարն
(կամ քիմիագէտն) բանի, և ներկանէ զար-
ծաթն յոսիկի՝ »:

Բայց աւելի ուրիշ տեսակ աշխատու-
թիւն մը որ կրնայ կոչուիլ արծաթոյ և ոս-
կուց, սիրելի է ինձ ցուցնել այս ժամանա-
կուան մէջ (Դար ԺԿ և ԺԿ) կատարուած,
կամ մանաւանդ մեծագին կամուրջ մը ձը-
ղուած, մասնաւորապէս Խաղաչի և Հայկ-
ազն վաճառականներէն, այն Այասի նա-
ւահանգստին և պարսկական մայրաքաղա-
քին Դամիթի միջոց, ուղիղ գծով մը կրու-
րելով բոլոր Հայաստանի երկայնութիւնը,
և անկէ բոլոր դէպ 'ի Հնդկիս և 'ի Չինաց աշ-
խարհ ճամբան շարունակելով. Գանի՝ մի-
լիոնաւոր վաճառք անցան զնացին և իրա-
նու հետ փոխանակեցան այս վաճառաշա-
րութեան գծին վրայ, Թերևս դժուար չըլ-
լայ զանոնք միւղ երեւակայելու. բայց պատ-
մական աշխարհագրին դեռ ևս փափագը
կատարելապէս չի լեցուիր՝ ճանչնալու այն
վերոյիշեալ երկու քաղաքաց մէջ եղած
ճամբուն 33 կայարաններ, որոնք միայն ա-
նուամբ յիշատակուած են վերջնաւոր
Բեկոյողդիէն, իւր մեծաշարժ գրքին մէջ որ
կոչուի Գործասական վաճառականութեան
Թէ որ յաւելցուած ըլլար աշխարհացոյց
մը և կամ գոնեայ իւրաքանչիւր հան-
գրուանաց մէկմէկէ հեռաւորութիւնները
նշանած ըլլար, տեսալ մը Պետիկիկերեան
ուղէցոյց տարւոտակ մը կ'ունենայինք, Բա-
ղամէ ետեւէ եղան ճշգրիտ այն վաճառա-
կանական կարուանին հանգրուանաց ա-
նունները՝ որոնք նաև շատ տեղ Թերի են
յուզղագրութեան, և ամենէն աւելի ա-
ղէկ վերոյիշեալ Հայաք. գրողս կը կարծէ

1 Վարդանայ Աշխարհագրութիւն վերոյի-
շեալ Սէն-Մարգընէն (Ժամանուեցաւ 'ի գաղ-
ղիերէն և հրատարակուեցաւ Խորենացոյն Աշ-
խարհագրութեան հետ, իրեն պատուական
գործոյ մէջ, Mémoire historiques et géo-
graphiques sur l'Arménie, Բարեդ. 1818, Հա-
թ. 62 406-471.

որ ճշգրտեց ըլլայ այն հանգրուաններէն մէկ քանի հատն ալ, բայց տակաւին ոչ սակաւ տարակոյտներ կը մնան ասոնց վերայ, թերեւ նաեւ անկերպարան կողմէ և մասամբ ալ կործանած սարսափելի լէնկ-թիմուր թաթարին՝ Սիւիդ նոր աշխարհակալին վայրենի խռովանքներէն, որուն պատճառաւ կրնայ ըստիլ թէ այլալոյցաւ ոչ սակաւ Լեւոնաշխարհական տնտեսութիւնը, ուստի պէտք եղաւ վաճառականութեան նորանոր գծեր և նորանոր դռներ փնտռել երկրան երեսը: Ի վերայ այս ամենայնի՝ չին հետքեր չէին ջնջուած բոլորովին: և նոյն միջոցին որ այն տնտեսի բռնաւորին բանակը զատուք կը կոխկուտէին, կը գտնենք ֆլայիլոյ մը և Շիլլպերիէր մը որ նոյն թագաւորին Սլքունկը կ'ընթանայ և ոչ սակաւ լոյս կը տարնէ իրենց անցած երկիրներուն վրայ, որոնց մէջ կայ նաև մեր հայրենիքն: Այս բաղադրուած և բռնադատեալ գերմանացի ճանապարհորդէն հազից կէս դար մը վերջը, կը տեսնենք որ նորէն նոյն ճամբան բռնեցին խումբ մը ընտիր իտալացի ճանապարհորդք, մեծաւ մասամբ Վենետիկցիք, որ Հայոց երկրէն կ'անցնին իթալա յարթունիս միապետաց նորանոր հարստութեանց Պարսկաստանի, որ են Ենկոյ Գաղերիկոյ, Յոսապատ Պարսպաւոյ, Գոնդարիկի Սմախաւ, և Անտոն վաճառական վենետիկցի, որոնց ուղեւորական պատմութիւնը խնամով հաւաքելով՝ հրատարակեց անոնց հայրենակից բարեմիշտակն Ռամուզիոյ:

Բայց ո՞վ կրնայ կարծել, որ մինչդեռ ասոնք և ուրիշ ուղեւորք Հայաստանի արեւելեան կողմէ կը դիմէին, մի և նոյն ժամանակ արեւմտից կողմանէ ճամբայ կ'ընէր անոնց հարեւակից մէկը, թերեւ իտալական սրագոյն և ճոխագոյն հանճարն, կը քննէր այն օրերուն մէջ հանդիպած զբօսադուրներէն, հրաբխային բռնութիւններէ պատճառեալ ցած երկրներու ողորմութիւնները, կը զննէր կործանած քաղաքներ, սառնամանից կարկուռի և փլատակաց տակ ջրախիտած մարդիկ, կը լսէր գետնի ահաւոր բոփոխները, Եւրոպայէն և Սլքունկովիէն աւելի ուժգին և ուրուրեղուտ, և նոյն իսկ զայրագին ծովէն, ինչպէս նոյն ինքը կը բացատրէ: և անկերկէ կարգէ զուրկ կատաղեալ բնութեան զիզողէզ այս ամեն արհաւիրքէն, կը համարձակէր դեռ ևս անվախ ներս մտնել ահեղածայն քարանձախն նեղ ճեղքուածին մէջ, և միշտմուխ ըլլալով թաւալալոր մինչև 'ի խորս կ'իջնէր յատակին, գետնին զաղտնիքը հետադառնելու համար:

Ինքն իսկ խորհրդագրած անձն, գոնէ այս կէտին: Ո՞վ կը կարծէ որ այն անձն ուրիշ մարդ չըլլայ՝ բայց ի՞նչ ապառնի գերագոյն նկարին վերայն ընթերցաց, Յուսալի է որ մասնական և մանրագին քննութիւն մ'ըլլուելով Ստանդեան ըստած ձեռագրին վրայ, որ կը պահօտի Միւսաու Սլքունկեան գրատետը, քիչ մը այս գաղափարքը գուրս հանէ, յայտնաւոր մեղի թէ երբ և ինչպէս այս ամենաքննելի այցելութիւնը ըրած է անմահանունն Լոնտոնոյ տա Վիկի յափուռն Եփրատայ՝ Տարուս և Մատարուս լեռանց մէջ, և յափուսն Արիկիոյ, զոր ինքն անխտիր կերպով կ'անուանէ Սլքունկեան Հայաստան¹:

Այս երևելի ճանապարհորդներէն ետքը յաջորդած դարուն մէջ սակաւութիւն կը տեսնուին, ապակովապէս տաճկական և պարսկական պատերազմաց աղմկայոյզ ժամանակաց համար, որոնցմով 'ի ծուէնս բաժանեցաւ մեր արդէն ամայացեալ աշխարհն. սակայն այց երան այս թուականիս, և խիստ քիչ գրուած մեզի տաւաղեցին. մեր աչքն այս քիչերուն մէջ կը տեսնեն շէնքերնաւ, Նիսպարի, Գարդարայոյ և Շիրիշ անգղիացիք, կարապետք իրենց անթիւ համազգեաց, որ մեր օրերը կը յաճախեն յԱրիս ինչպէս յԵրուսալ. Յաջորդ ժէ՛ զայն կրնայ համարուիլ իբր գաղղիական ' նկատմամբ այցելուաց Հայաստանի, թէ՛ հրաբույժք ըլլան և թէ՛ վաճառականք. բայց ընդհանրապէս վերջի երեք դարերուն մէջ այնպէս բազմաթիւ են Հայաստանի և շրջակայ երկրներուն վրայ գրող մատենադրներն, որ եթէ հարկ ըլլար և ձանձրութիւն չաւտանաճեր՝ ինչայի 200էն աւելի մատենագրաց անուն համրել և աւելի ևս թուով մը անոնց վերաբերեալ գրուածները: Գործք՝ որ սյուրուան օրս կրնայ ըստիլ թէ կը վրասն զանազան կերպերով ոչ միշտ հաւասար տեսութեամբ և արժէքով. թէպէտ և շատերուն մէջ որ խօսեցան Հայաստանի վրայ նաև աշուտ տեսութեամբ, չեն կրնար բաց եթէ քիչըր ունենալ այն արժէքն և ծանօթութիւնն, ինչպէս են Դուրեքթոր, Շարուն, Բարդոք, Բերդարդ, Էյի Սմիթ, Տիպոլա ար Մոնրիքսոյ, Է. Քոխ, Վալենկ, Մարիս, Դենիկ, Տյոյոյ, Բ. Պրայս, և նրքամիտ անխոնք քննարաններ օմանք, ինչպէս են կրկին Մեկ Մարդեք, արեւելագէտն՝ որուն վրայ երկար խօսեցանք. և Հոգակեան Վիվիէն, որ այժմ իսկ կը պսակէ իւր եր-

¹ Տես զանգղիական օրագիրն The Academy, 1881, (12 մարտ 1881).

կայն և միծաղին աշխատութիւնքը մեծ Աշխարհագրական Բաժարանով և Մշակույթ. աշխարհագրագետն Ռիդլեր, և իւր ար. սանձաւոր յաջորդը Հ. Քիլերդը: Այնքանք Հայաստանի մասին ի յաշխարհահան. գիտիս կրնան նշմարել հարիւրէն աւելի այս ճանապարհորդաց և մատենագրաց գործերը, և անոնց քովը ազգային մատենագրաց գործեր ալ, որ թէ և բազմաթիւ չեն, բայց յերուի ստուգագոյն են իրենց տուած տեղեկութեանցը մէջ իրենց հայրենի երկրին այլ և այլ գաւառացի:

Վերոյիշեալ Վարդանէն ետքը, մասնաւորապէս նկատմամբ աշխարհագրական ուսմանց՝ մեր գաղութիւնն աղմկալից յաջորդ ժամանակաց մէջ յուզելով՝ մեղի միայն քիչ կարեւոր և փոքր գործեր թուղէր է: Եւ սակայն յիշատակաց արժանի են քանի մ'ամենափափաքելի գործեր, կորուսեալ և կամցարդ ծածկեալ ինչպէս է այն ընդհանուր աշխարհացոյց տախտակն և բոլոր անդեաց և վանորէից Հայոց ստորագրութիւնը, զոր մեր կաթողիկոսներէն մէկը յօրինել տուաւ, և 1562ին քղեց առ զերազոյն քահանայապետն Պիոս Դ, ձեռամբ նախագովեալ մեր նախատաղարդ Սրգաբէն: Մեր յառաջագոյն յիշեալ Սնկիւրացոյն ժամանակակից, որ է ըսել ի սկիզբն ԺԷ դարու, նշանաւոր անձ մ'ալ՝ Գրիգոր պատրիարք կ. Պօպի, բայց յայլ գրուածոց՝ ուսումնական աշխարհագրութեան գիրք մ'ալ թարգմաններ էր յարար լեզուէ, և ինքնին շիներ էր առաջին անգամ մեր մէջ յիշեալ էրիկնագոնոս մը հայերէն անուամբ գրեալ¹: Իսկ նոր յիշեալ Սրգարու գործոյն նման աշխատութեան մը ձեռք կը գտնէր, 150 տարի ետքը, հայրենասէր անձ մը՝ Էրեմիա Չիլեպի մականունամբ փեմիարևան, և երիցագոյն եղբայր Դրանկի Տէր Կոմիտասայ խոստովանողի, որ մարտիրոսացաւ ի կ. Պօլիս յամին 1707: Այս աշխարհացոյց տախտակը չինուեցաւ ի խնդրոյ Գերմանիոյ կայսերական Դեսպանին որ ի կոստանդնուպոլիս, որ և աւելցրեմէ տուաւ հայկականին Հետեւորդական լեզուով Հայաստանի տեղեաց և վանորէից անունները: Անտարակոյց արգիւնաւոր և օգտակար ծառայութիւն մ'ըրած կ'ըլլայ, թէ որ ճարտար անձ մը Վեն-

նայի կայսերական դիւաններուն մէջ փընտելու փորձ փորձէ, և կամ նոյն իսկ այն դեսպանին ազգատունին քովը, որուն ոչ անունն և ոչ թուականը գտեր եմ, նա մանուանդ և ոչ այլ ուրիշ նշան մը նոյն գործոյն, եթէ ոչ զի հեղինակն շատ աշխատանքով վատասելի էր անոր վրայ, մասամբ մը այն իրմէ նշանակուած տեղեաց ինքնին անձմար այցելու եղած ըլլալով, և մասամբ մ'ալ տեղացոյց և տեղերուն զիրքերը աղէկ ճանչցողաց արժանահաւատ վկայութեամբ ստուգած ըլլալով:

Միւրեքեւ Երևմտի ի կոստանդնուպոլիս Հայաստանի քաղաքական սրբազան աշխարհացոյցին կը պարապէր, հայ եպիսկոպոս մը ընդի ծննդեամբ ի նուիրական ափանց Երասխայ, Գոթին գաւառէն՝ հրուսկաւոր իրեն Հին վիպասանից և իրեն գինուէտ այդեստանեաց համար, ինքն ալ բանաստեղծ, թուրքաւ անունով, Հոյանտայի մայրաքաղաքը փոխաբուելով իւր քեռույ որդւոյն (Մատրեան) և (Ղուկաս) եղբորդուէն Հետ, յետ քաղաք մաշխատութեանց և ծախուց, 1695ին կը հրատարակէր չքեղ և մեծ Համաւարած տախտակ մը, պղծպատի վրայ փորուած, Դոնեպէք յաջողակ արուեստագէտ եղբարց ձեռքով, ինչպէս որ կը ցուցնէ փորուած լատին արձանագրութիւնն. « Hadrianus et Petrus Damianus Schoonebeck fratres faciebant Amstelodami, MDCCXCV. »: Արժանի է անկարկել մէյմը այն աշխարհացոյց տախտակին՝ որ յԱշխարհահանգիսիս զրուած է, և առաջինն է ի կարգի հրատարակեալ Հասարակաց հայկական տիպարոսցոյցից, կատարելութիւնը դատելու համար, և զարմանալու յաւելեալ մասանց ճոխութեամբ. ինչպէս են կենդանակամարին նշաններուն և եղանակաց սլաքանական պատկերաց չարքն: Ասոնք ներկայացնող են չորս խմբով համաւարածին երկու կիսագծոց չորս անկեանց մէջ, և ամեն մէկ պատկերին ներքեւ իւրաքանչիւրին անունը նշանած. պատկերաց խումբերն այսպէս զետեղած են. ԶԳրարուն կը ներկայացընեն՝ Փայետոն, Փերոս, Պիրրոս, Արուսեակ և Արէս մարտակ. զՄանուր կը ներկայացընէ Լուսաբերն Աստղիկ, Իսիս, Հերա, Անահիտ, Գիւլերամար, Կոնոս,

¹ « Նոյն Սրգար նուիրաններնուս, (և այլն, կը գրէր Կաթողիկոսն առ Պօպն) տուիմք, որ մեր Սրբութեանը մատուցանե... ցուցակ ըստ նշանայն տեղեաց, և մենասանաց ճարտր Ժողովոցոյ Հայոց ազգին: Իրենամբ, Տարեգրքը, յամին 1564, թ. 51:

² Իր վարուց յիշատակագիրն, որ և իւր եւ-

բորդին է, կ'ըսէ. « Տեղեակ (էր Գրիգոր) արտաշէնցն հանձարոյ, և ես պարսկերէն և երկրաշափահանին, լի և անթիւն: ... Այլ և թարգմանեալ գիրք մը բառաբարարակ լեզուէ ի մեր բարբառ. այլ և գուշ մը ի մեր բեր և լեզուս, երկնից հանգոյն աստեղաշարք չարիւ զարդարեալ: »

Հերմէս. Անան կը վերաբերին Պան, Պո-
նոնա, Դեմետր, Կիւբէլէ, Գորիս. Զմե-
ռան՝ Ելեոս, Վոուէս, Պոսիդոն, Թեսիս,
Փոքր երկնագունտ մը կը ցուցնէ զհամ-
աստեղութիւնս: Հեղինակն, և կամ թէ
քսենք, գործոյն կատարողն թո՞վմաս եպի-
կոսոս՝ արտայայտեց և տպիչ տուաւ հա-
յերէն ոտանաւոր յիշատակարան մը նոյն
տախտակին ներքեւ, այսպէս.

« Երորդ քանդակ գեղեցկամէկ հանրանշան
Փոխաբերեաց թո՞մաս յետնորդ ոտ լանանդէսն.
Փորագործ թիւն յոյժ ցանկալի,
Ի ձեռն եղբարց հարազատի,
Ագրիանու Երկնքէկէ,
Եւ Պետրոսի քաղաքաժոյժի,
Ընդ Գուկասու հմտագունծի.
Որկամբք բազմեք յայտածօքի
Նշքօրորդի իմ անդրանիս:
Պահեսցէ էն յերուսժոցի,
յմանդէրամ, 1693 »:

Այս ոտանաւորին գլուխը պարսկերէն
գրուած է Ճիհան-պէյն (جهان پايان),
որ է ծանօթութիւն աշխարհի կամ Տիւղերու
գլխութիւն¹, Վերջիւնյալ հեղինակը հրա-
տարական էին նաև փոքր գրքոյի մը մեկ-
նական, անուանելով զայն Բանայի Համա-
տարածի, 1690էն ՚ի վեր տպագրեալ, որ
նշան է թէ Աշխարհացոյցին փորագրու-
թիւնն ալ քանի մը տարուան մէջ եղած է:
Այս է փորագրեալ տառքին հայկական
աշխարհագրական տախտակն մեզի ծա-
նօթ, և թերևս ամենէն գեղեցկագոյնն
կամ չքեղագոյնն:

Որովհետև յիշեցիր՝ թէպէտ և անուղ-
ղակի՝ օտար փորագրողներ, արգար թուի
ինձ չմոռնալ Հաճի-պալիֆա տաճկի անուա-
նի աշխարհագրին տաճկական Տախտակաց
հայ քաջ փորագրողը, որք 1728ին հրատա-
րակուեցան ՚ի Կոստանդնուպօլսի . մեր
Հայուն անունը կը յիշէ Գոտէրինի իւր
Տաճկական նամակաց մէջ . և կ'ըսէ թէ
ինքն ունի իւր ուսումնոցին մէջ « Մա-
կարդակ կիսագնդի մը Տախտակը Բարակ
փորուած ՚ի զպաթիպցի Միլտու² »:

Ի հանդիսի գրուած աշխարհագրական
Տախտակաց հաւաքմանը մէջ յետ Ամ-
սլերտամին կու գան Վենետիկոյ Միսիթա-
րեանց շինել տուածները. որոնց մէջ է
Հինն Պաղեստին (թ. 6), գործադրեալ

1746ին իրենց անմահական Հիմնադրին
Միսիթարայ Զանիքը. ուրիշ մ'ալ (թ. 7)
ամբողջ Հայաստանի, նոյնպէս իրմէ պատ-
րաստուած, և հրատարակեալ իրեն մա-
հուրէն երկու տարի ետքը: Աշխարհա-
ցոցից շարքին մէջ անոնցմէ առաջ դրուած
են (թիւ 2-3) Չորից մասանց աշխարհի
տախտակները, որ շինուեցան 1786-7ին,
Վանանդեցիին Աշխարհացոյցին ախորժա-
կին հետեւելով՝ զարգարուած են փորագրի
գեղեցկագոյնն խորհրդաւոր նշաններով:
Համապարաժ (թ. 8) որ զանոնք կը լրացը-
նէ, անոնցմէ երեք տարի առաջ շինուած է
(1784), Չանց կ'ընեմ ականարկելու Հաւա-
քածոյն մէջ ամեն եղածը, որ ամենը մէկէն
երեսունի չափ մեծ է մանր աշխարհացոյցը
կը պարունակէ . ուստի միայն կը յիշա-
տակեմ 10 տախտակաց Մեծ Աղտար, մա-
սամը ՚ի Բարիզ շինուած մասամբ մ'ալ հօս
՚ի Վենետիկ, 1849ին, և Փոքր Աղտար՝ որ կը
բաղկանայ 12 տախտակներէ, նոյնպէս ՚ի
Ս. Վազար շինուած յանրոգ տարին (1850),
ի Հարց Միսիթարեանց Վենետիկ շինուած՝
հրատարակուեցաւ ուրիշ Աղտար մը հա-
ւասար մեծութեամբ և 21 տախտակով
1857ին. ասոնք միանգամայն բաց յերկու
պզոտի Գառնտերի, տուին մեզի նաև գեղե-
ցիկ Երկրագունտ մը երկու ոտանաչափ տրա-
մագծով:

Պէտք չէ լուել հօս նաև կէս-երկնային
նոր արուեստէն հանած օգտակարութիւն-
քը, որ հրաշալի կերպով լուսով կը նկա-
րէ ոչ միայն մարդկանց գէմըր, այլ նաև
բնութեան ուրիշ գեղեցկութիւնքը և ճար-
տարապետին գործերը: Դուստնկարչու-
թիւնն թէ որ այնչափ երկիրներու համար
աշխարհագրութեան մեծ օգնական եղաւ,
մեր աշխարհին համար կրնանք ըսել նա-
խանամական. վասն զի ասով, թէ որ
կրնայ զուրցուիլ, կը փրկուին և կը պա-
հուին թղթի վրայ իւր Հին յիշատակարան-
քըն, որք յանգնութիւնն օրէ օր կորու-
սանելու վրայ են իրեց իսկատիպ կերպա-
րանքը, և նոյն իսկ գոյութիւննին: Հօս
գրուած Մեծ Տետրակ մը, կը ցուցնէ բաց
յուրուագիծներէ և տպագրիւններէ՝ Հայա-
ստանի շատ մը լուսանկար պատկերները, որ
մասամբ Թուս արուեստագիտի (Երմա-
քոֆ) մը գործն է, և մաս մ'ալ ազգային
արուեստագիտաց. որոնց մէջ նշանաւո-
րաց մէկն է Տփլիսսաբնակ Բալի. Քիպը
ձևակ, որ անբաւ զոչողութեամբ և վառ
տակօր Հարիւրաւոր պատկերներ լուսա-
նկարեց մեր անուանի Աղիտատր քաղաքին
Անայ, որ Ժ դարուն մեր Բագրատունի
Թագաւորաց մայրաքաղաքն էր. և անոնց-

¹ Այս համառարած Աշխարհացոյցին պղծն.
ձէ տախտակաց ուժէ կտորներն կը պահուին Ս.
Ղազարու Միսիթարեանց քոժ:

² La carta di un piano emisfero da Mighir-
dis di Galata finamente intagliato. Հա. Գ. էջ
116-7.

մէ մեծ մաս մը հայերադիտակի յարմար-
ցուած են, ինչպէս որ Աշխարհահանգիսիս
մէջ գրուած 50 հատի չափ կը տեսնուին:

Մտածելով արդ որ այս տախտակաց,
աշխարհացոցից, լուսանկարաց և աշ-
խարհագրական գիտութեան վերաբերեալ
գրոց որ և իցէ Հաւաքմունքն, արդարեւ կը
պարունակէ հայկական գործոց մեծագոյն
մասը՝ այլ ոչ բովանդակը, այս տեսակին
մէջ, վերջի մէկուկէս դարու միջոցին մէջ,
որ յաջորդեց նմանօրինակ վշտալի ուրիշ
նախընթաց մէկուկէս դարու մը, մեր հայ-
րենական երկրին վրայ տաճկական և
պարսկական բանակաց խիստ շատ անգամ
իրարու հետ բախմամբը, և վերջերս՝ այս
դարուս մէջ Ռուսական զեղից խաղաղ-
մունքը (որ չորս կամ հինգ արագ պատե-
րազմներով առին յառաջնոցն ոչ սակաւ
մասն)։ — մտածելով նաև գրեթէ անընդ-
հատ եղած աւերմունքները յանսանձ և
գերբիւղ ցեղերէ, յոյս ունիմ՝ որ կորեկ-
ցութեան արժանի ըլլայ Հայ ազգն, թէ

որ յաջորդած չէ այնչափ անդուլ տառա-
պանաց մէջ աւելի ևս մշակելու աշխար-
հագրական ուսմունքը, մասնաւանդ իւր
հայրենեացը. որ երբեմն ունէր հաւանօրէն
արդի բաղմամարդ խտալիայէն աւելի գիւ-
ղորայս, յորոց հիմա հազիւ թէ մեզի կը
հասնին 3000 յատուկ ազգային անուններ,
ի բաց թողլով օտարաձայն անունները.
բայց խժոճութիւնն և բարբարոսութիւնն
որ վեց դարէն աւելի եղաւ և դեռ ևս կայ,
օրէ օր կործանելով իւր պատուական յի-
շատակարաններէն մէկը, և անհետացը-
նելով ամ յամէ այն նուիրական և սիրելի
հայրենական անուններէն մէկը, կը վախ-
ցնէ զմեզ, (թէ որ իրականապէս չփոխուի
այս կերպով երկրի մը վարչութիւնս, որ
ինչ որ ալ ըլլայ՝ չուրանայ պիտի երբեք իւր
նախնական ազնուականութիւնը, և ոչ պի-
տի մոռնայ իրեն արդիւնը՝ ինչ ալ որ ե-
ղած ըլլայ), շատ չիրթար որ փոխանակ
հայկական աշխարհագրութեան, Աւերա-
գրութիւն մը պէտք ըլլայ:

Հ. ՂԵՌՈՒՎ Մ. ԱՒԵՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՅՈՅՈՑ

ԲԱՂԴԱՏԵԱԼ ԸՆԴ ՊՏՂՈՄԵԱՅ

ՀԱՅ ԲՆԱԳԻՐՆ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՎԻԵՐԷՆ

Մովսեսի Խորենացոյ Աշխարհա-
գրութիւնն շատ անգամ քննութեան
ենթարկուեցաւ, որ և երբեմն իբրեւ ան-
վաւեր մերժուեցաւ: Յայնապէս ա-
ռաջին մերժողն եղաւ գիտնականն Սէն-
Մարդէն, որ համարձակեցու ստղտա-
նել զայն իբրեւ սուտանուն, կոչելով
Սաւա-Խորենացի¹, և ծանուցանելով
որ այս գործս ե՞ր դարէն շատ ետքը գը-
րուած պիտի ըլլայ: Ես չեմ ուզեր հօս
հերքել այս քննադատին աւարկու-
թիւնները. բաւական է միայն ցուցնել

որ այս Աշխարհագրութիւնն է երկա-
սիրութիւն Մովսեսի Խորենացոյ, և
հետևաբար՝ ե՞ր դարու գրուածք: Թէ
արդեօք յօտար ձեռաց շատ յաւե-
լուած եղեր է մէջը, անոր չեմ հակառա-
կիր. նոյն և կը համարիմ որ անոնք ե-
ղած ըլլան ֆրիստոսի թուականին 600
և 700 ամաց մէջ: Գործն՝ որ այսօր կը
հրատարակենք, հայերէն ձեռագիր մը
թարգմանութիւնն է, շատ տարբեր
անոնցմէ, որ պատճառ եղան քննադա-
տութեանց, զորոց խօսեցանք:

Մարեցաւ զայն ի՞ր դարուն գրուած, հաւանա-
կանաբար Անանիա Նիրակացիէն, որ հմուտ էր
աստղագաղութեան և քնական պատմութեան:

Տես Մովսեսի Խորենացոյ Աշխարհագրու-
թեան վրայ, ի Journal des Savants, 1789, էջ
217. Պարոն տը Սէնդ-Պրուա:

¹ Սէն-Մարդէն յաջորդէր ունեցաւ, այլ
ոչ յանդուգն ի քննադատութեան իբրեւ զնա:
Հայ գիտնականն Պատկանեան, այս վերջի տա-
րիներուս մէջ հրատարակեց Մովսեսի երկասի-
րութիւնն, թարգմանեալ ռուսերէն և լի ծանօ-
թութեամբ: Գծարդգաբար իր նախորդաց կար-
ծեացն հետեցեալ, քիչ բան փոփոխելով: Հա-